

**ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ ՔՆ ԾՁԲ - N 12/4**

ք. Գյումրի

Հինը փետրվարի երկու հազար տասներկու

<Ստանդարտների Ազգային Ինստիտուտ> ՓԲԸ (ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2) այսուհետ՝ <Վարձատու, որի անունից համաձայն ընկերության տնօրենի կողմից 01.02.2012թ. տրված N ԵԱ-28 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Արտյոմ Սարգսի Մկրտչյանը (անձնագիր՝ AK0396866, տրված 11.11.2009թ. 016-կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Վ. Սարգսյան փող., 1-ին թաղ., տուն 30), մի կողմից, և ՀՀ Քաղաքաշինության նախարարությանը (ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 3), այսուհետ՝ <Վարձակալ>, որի անունից ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավարի 30.01.2012թ. տրված N12/7 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի պետ Ժորա Միքայելյանը (անձնագիր՝ AM0450015, տրված 08.09.2011թ., 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Գործարանային նրբ. տուն 21), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վարձավճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով Վարձատուին պատկանող (Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N2646623, տրված՝ 26.06.2009թ.) ոչ բնակելի տարածք, այսուհետ՝ <Օբյեկտ>, որը գտնվում է ք. Գյումրի, Շիրակացի 68 հասցեում՝ գրասենյակային նպատակով օգտագործելու համար համաձայն (հավելված N1):

Վարձակալության հանձնվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 104.77 քառակուսի մետր: Ամբողջը բաղկացած է. մասնաշենք՝ 1554,14քմ, ավտոտնակ՝ 77,0քմ, օժանդակ կառույց՝ 53,89քմ, հողամաս՝ 0,182925 հա, ընդհանուր օգտագործման տարածքը 122.36 քառակուսի մետր:

1.2 Օբյեկտը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, որը հաստատված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակ տարածքային ստորաբաժանման Գյումրի սպասարկման գրասենյակի կողմից տրված NUS-06022012-08-0015 միասնական տեղեկանքում տվյալները լրացված են <06> փետրվարի 2012թ-ի դրությամբ:

1.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու տարի ժամանակով մինչև 2014 թվականի փետրվարի 9-ը:

2. Պայմանագրի գինը

2.1 Սույն Պայմանագրի վարձակալության տարեկան վարձավճարի չափը կազմում է 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը կազմում է 100.020 (մեկ հարյուր հազար քսան) ՀՀ դրամ, վարձակալության ամսեկան վարձավճարի չափը կազմում է 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերն ու պարտադիր վճարները:

2.2. Վարձակալը Վարձատուի հաշվին փոխանցում է վարձավճարը պայմանագրում նշված հաշվեհամարին՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից յուրաքանչյուր ամսվա համար հաջորդ ամսվա 30-ից (երեսուն) ոչ ուշ, որի վերաբերյալ եռօրյա ժամկետում Վարձատուին է ներկայացնում վճարման անդորագրերի պատճենները

2.3 Վարձավճարը կայուն է, Վարձատուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Վարձակալը նվազեցնելու այդ արժեքը:

3. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1 Վարձատուն իրավունք ունի.

3.1.1 պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

3.2 Վարձատուն պարտավոր է՝

3.2.1 Օբյեկտը Վարձակալին հանձնել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածին համապատասխան, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում:

3.2.2 Ոչ, ուշ քան երկու ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքը հիմնական վերանորոգում իրականացնելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ:

3.3 Վարձակալն իրավունք ունի՝

3.3.1 պահանջել Վարձատուից՝ սույն պայմանագրի 3.2.1. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Օբյեկտը.

3.3.2 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրել օբյեկտին վերաբերող փաստաթղթերը.

3.4. Վարձակալը պարտավոր է՝ 3.4.1. Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և Օբյեկտի նշանակությանը համապատասխան.

3.4.2. ժամանակին մուծել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 2-րդ կետում նախատեսված վճարը (վարձավճարը).

3.4.3. առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ (իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեջ Օբյեկտի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում):

3.4.4. Օբյեկտն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

3.5 Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնում կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

3.6 Վարձակալության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա) Վարձակալի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ) եթե դա Վարձակալի գործողության կամ անգործության հետևանք չէ:

3.7 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա վարձակալը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վարձակալի կողմից սույն պայմանագրով նախատեսված գումարի փոխանցման ժամկետի խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար գանձվում է տույժ՝ սույն պայմանագրի 2.1 կետում նախատեսված գումարի 0.05%-ի չափով՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

4.2. Վարձատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 2.1 կետում նախատեսված գումարի 0.05%-ի չափով:

4.3. Սույն պայմանագրի 4.1 և 4.2 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

4.4. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում, կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5. Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

4.6 Այն դեպքում, երբ <Գնումների մասին> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Վարձակալն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Վարձակալի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Վարձակալի ստացածով:

5. Վարձակալած Օբյեկտի բարելավումները

5.1 Վարձակալած Օբյեկտից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

5.2 Վարձակալի կողմից կատարած վարձակալած Օբյեկտի անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից: Պայմանագրի մեկական օրինակ տրվում է Կողմերին, մեկ օրինակ՝ նոտարին, մեկ օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման: Վավերացված բոլոր օրինակները ունեն հավասար իրավաբանական ուժ, սակայն նոտարի վավերացրած կամ հաստատած պայմանագրի բնօրինակը համարվում է նոտարի մոտ պահպանվող օրինակը, իսկ բնօրինակի և մյուս օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է բնօրինակին:

8.2 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

8.3 Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման սույն կառավարության կողմից կնքելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում՝ ՀՀ կառավարությանն առընթեր

անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

8.4 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից և վավերացված նոտարի կողմից: Սույն պայմանագրի N 1 հավելվածը դրա անբաժանելի մասն է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ

Վարձատու

«Քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3
հ/հ 900011014363
«ՅՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
հվհհ 02565827

«Ստանդարտների Ազգային Ինստիտուտ»
ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2
հ/հ 0000247120046898
«Արդշինինվեստբանկ», Արաբկիր մ/6
հվհհ 00081133

Լիազորված անձ՝

[Handwritten signature]

Կ.Տ

Լիազորված անձ՝

[Handwritten signature]



Կ.Տ

Երկու հազար տասներկու թվականի *[Handwritten]* սույն պայմանագիրը վավերացված է իմ « Գյումրու նոտարական տարածքի նոտար *[Handwritten]* կողմից: Պայմանագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ներկայացուցիչների) լիազորությունները ստուգված են:

«Քաղ. օր.-ի 563-րդ հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները երեսուն օրվա ընթացքում ենթակա են գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում 940 ով:

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարական մասին» ՀՀ օրենքների



ք. Գյումրի:

<14> փետրվարի երկուհազար 2014թ.

<Ստանդարտների Ազգային Ինստիտուտ> ՓԲԸ (ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2) այսուհետ՝ <Վարձատու>, որի անունից համաձայն ընկերության տնօրենի կողմից 12.02.2014թ. տրված N ԵԱ-38 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Արտյոմ Սարգսի Մկրտչյանը (անձնագիր՝ AK0396866, տրված 11.11.2009թ. 016-կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Վ. Սարգսյան փող. 1-ին թաղ., տուն 80), եւ ՀՀ Բաղաքաշինության նախարարությանը (ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 3), այսուհետ՝ <Վարձակալ>, որի անունից ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վ. Խաչատրյանի 07.02.2014թ. տրված թիվ 485-14 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության Գյումրու ստորաձևային բաժնի պետ Ժորա Միրայեյանը (անձնագիր՝ AM0450015, տրված 08.09.2011թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Գործարանային նրբ. տուն 21 հասցեում), մյուս կողմից ղեկավարելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով 09.02.2012թ. կնքված <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> ՀՀ ՔՆ ԾՁԲ- N 12/4 պայմանագրի հայտուհետ Պայմանագիր/ 3.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

9 փետրվար 2012թ. սկզբից կնքված եւ Գյումրի նոտարական տարածքի նոտար Ռ. Մուկուչյանի կողմից հաստատված սեզանտության 940 <<ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ>> ՀՀ ՔՆ ԾՁԲ – N 12/4 բարձրագույն 1.3 կետով կատարել հետևյալ փոփոխությունը:
1.3 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ սույն պայմանագիրը կնքվում է 2015թ. դեկտեմբերի 31-ը մասնագրի մեջում կետերը բացել անփոփոխ:


2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ


- 2.1 Սույն համաձայնագրի առկա մեծ մասում ստորագրման պահից է համախառնում է կողմերի միջև 09.02.2012թ. կնքված Վարձատուի անձնակցի մասով:
- 2.2 Սույն համաձայնագրում Գյումրի համայն ճնշված՝ Պայմանագրում նախատեսված պայմաններն ու պարտավորությունները մնում են անփոփոխ:
- 2.3 Կողմ համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից: Պայմանագրի մեկական օրինակ տրվում է կողմերին՝ մեկ օրինակ՝ նոտարին՝ մեկ օրինակ՝ ՀՀ կառավարությանն արքայի անձրած գույքի կառուցարկի գլխավոր գործակեր համապատասխան տարածքային ստորաբաժանում: Վավերացված բոլոր օրինակները նման հաստատար իրավորական ուժ, ուսկայն նոտարի փափրագրած կամ հաստատած համաձայնագրի բնօրինակը հաստատվում է նոտարի մոտ պահպանվող օրինակը, ըսկ բնօրինակի եւ մյուս օրինակները միջև հավաստությունը դառնում նախապատվությունը տրվում է բնօրինակին:
- 2.4 Սույն համաձայնագիրը կնքվում է հատարական վավերացման:

3. Կողմերն ուստիները՝ բանեղյակ վավերացվածները եւ ստորագրությունները:

Վարձակալ
ՀՀ քաղաքաշինության
նախարարության
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3
հ/հ 900011014363
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
հվհհ 02565827

Վարձատու
<Ստանդարտների Ազգային
Ինստիտուտ> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտասի 49/2
հ/հ 2471200468980000
<Ար 42 ի ն վ ն ս տր ան կ >, Ար ար կ ի ր
մ / ձ
հ վ հ հ 00081133

Լի ա գ ո ր վ ա ձ ան ձ

Կ.Տ


Լի ա գ ո ր վ ա ձ ան ձ

Կ.Տ

Երկու հազար տասնչորս թվականի փետրվարի տասնչորս սույն համաձայնագիրը վավերացված է իմ
ՀՀ Գյուլիսի նոտարական տարածքի նոտարի Պարեգոյ Վահագնյանի կողմից:
Սույն համաձայնագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրողների
ինքնությունը, նրանց գործունեությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց ներկայացուցչի
(ներկայացուցիչների) լիազորությունները ստուգված են:

Սույն համաձայնագիրը ենթակա է գրանցման կադաստրի համապատասխան ստորագրածանումում:

Գրանցված է սեղանամատյանում 1060 ուլ:

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար
համաձայն <Պետական տուրքի մասին> և
<Նոտարիատի մասին> ՀՀ օրենքների



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

09.02.2012թ. կնքված «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» N ՀՀՔՆ ԾՁԲ-12/4 պայմանագրի

ք. Երևան

«26» փետրվարի 2016թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Էդգար Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վարձակալ), մի կողմից, և «Ստանդարտների Ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ենոք Ազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձատու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, ինչպես նաև հիմք ընդունելով 09.02.2012թ. կնքված «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» N ՀՀՔՆ ԾՁԲ-12/4 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), 3.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Պայմանագրի 1.3 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Պայմանագիրը գործում է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը: Պայմանագրի ժամկետի ավարտից 2 ամիս առաջ եթե Կողմերից որևէ մեկը պատշաճ չի ծանուցել մյուս կողմին պայմանագիրը լուծելու մասին, ապա այն համարվում է ևս մեկ տարով երկարաձգված:»:

1.2. Ավելացնել Պայմանագրի 1.4 կետ՝ «Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ ցանկացած այլ ժամկետում:»:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2016 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ

Վարձատու

ՀՀ քաղաքաշինության նախարարություն


«Ստանդարտների Ազգային ինստիտուտ» ՓԲԸ

Հասցե՝ **Կառավարական փողոց թիվ 3**
Հ/Հ 900011014363, ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավար

Հասցե՝ ք. Երևան, Մարտիրոսի 49/4
Հ/Հ 2 27 06 08 00 00 00
ՓԲԸ
ՀՎՀՀ 088881
Տն



Է. Գևորգյան



Կ.Տ.